

Ինչպես աջակցել  
գենդերային  
բռնություն  
վերապրած անձանց  
այն դեպքում, երբ  
ձեր բնակավայրում  
մասնագիտացված  
ծառայություններ  
չկան

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՈԼՈՐՏԻ  
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ  
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՓՈՒԼԱՅԻՆ  
ՈՐԴԵՑՈՒՅՑ



# ԻՆՉ Ե ԳՐՊԱՆԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Այս **գրպանի ուղեցույցի** նպատակն է՝ **հումանիտար ոլորտի բոլոր աշխատողներին** տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե

- > **ինչպես աջակցել գենդերային բռնության ենթարկված անձանց,**
- > **ուլքեր ձեռք պատմում են իրենց հետ պատահածի մասին,**
- > **այն դեպքում, երբ գենդերային բռնության ենթարկված անձանց համար հասանելի ծառայություն մատուցող չկա (ինչպես նաև բացակայում է գենդերային բռնության զոհերի ուղղորդման հնարավորությունը կամ չկա պատասխանատու անձ):**

Այս **գրպանի ուղեցույցը** մշակված է՝ հիմնվելով գենդերային բռնության ենթարկված անձանց առանց լրացուցիչ վնաս հասցնելու նվազագույն աջակցություն և տեղեկատվություն տրամադրելու միջազգային չափորոշիչների վրա: Այն պետք է հարմարեցվի ձեր պայմաններին համապատասխան մասնագետի օգնությամբ՝ պահպանելով զոհակենտրոն մոտեցում:

Քանի որ **գրպանի ուղեցույցը** կազմված է Հոգեբանական առաջին օգնության (ՀԱՕ) շրջանակի հիման վրա, այն է՝ պատրաստվել, հետևել, լսել և կապել, ապա ՀԱՕ շրջանակի մասին նախնական գիտելիք և փորձ անհրաժեշտ չէ: Այդուհանդերձ, խորհուրդ է տրվում այդ թեմայով համապարփակ վերապատրաստում անցկացնել:

ԲԱԺԻՆ	ԷԶ	ԳՈՐԾԱԾԵԼ ԴԵՏԵՎՅԱԼ ԴԵՊՔՈՒՄ
Հիմնական խորհուրդներ	2 - 3	Անհետաձգելի ուղղորդում
Որոշումների ծառ	4	
Անկա ծառայությունների տեղեկատվական թերթիկ	5 - 6	
Ինչ անել, չանել ու ասել Հետևեք Լսեք Կապեք	7-10	
Քայլ առ քայլ ուղեցույց. Աջակցության հայցում և պաշտպանություն սեռական ոտնձգությունից և չարաշահումներից. ՊՍՈՉ /PSEA/ Նախապատրաստվեք, հետևեք, լսեք, կապեք	11 - 15	Պատշաճ արձագանքի նախապատրաստում, գիտելիքի և հմտությունների ձևավորում
Աջակցություն երեխաներին և դեռահասներին	16 - 20	Անհապաղ աջակցության ուղեցույց անչափահասներին

# ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

----> **Մշտապես խորհրդակցե՛ք գեղերային բնության հարցերով մասնագետի հետ, որպեսզի տեղեկանաք, թե ինչ ծառայություններ կան ձեր շրջապատում:** Որոշ ծառայություններ կարող են թեժ գծի, բջջային հավելվածի կամ հեռահար աջակցության ձևաչափով տրամադրվել:

----> **Տեղեկացված եղե՛ք ձեր տարածքում գործող այլ ծառայությունների մասին:** Հատկորոշեք մարդասիրական ոլորտի գործընկերների տրամադրված ծառայությունները. առողջապահական, սոցիալ-հոգեբանական աջակցություն, ապաստարան ու ոչ պարենային ապրանքների տրամադրման ծառայություններ: Հաշվի առեք համայնքի կողմից տրամադրվող ծառայությունները, օրինակ՝ եկեղեցիներում կամ կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ մատուցող կառույցներում:

----> **Իմացե՛ք ձեր դերը:** Հանդես եկեք լսողի դերում և զերծ մնացեք դատելուց: Առկա ծառայությունների վերաբերյալ տրամադրեք թարմ և ճշգրիտ տեղեկատվություն: Թույլ տվեք տուժողին անել սեփական ընտրությունը: Հասկացե՛ք, թե ինչը կարող եք և ինչը չեք կարող կառավարել: Անգամ եթե ձեր տարածքում գեղերային բնության հարցերով գործող մասնագիտացած կառույց չկա, կարող եք այլ գործընկերներ լինել, ինչպիսիք են օրինակ՝ երեխայի պաշտպանության կամ հոգեկան առողջության հարցերով զբաղվող մասնագետները, որոնք կարող են տուժածներին լրացուցիչ ուշադրություն և աջակցություն տրամադրել: Մինչև որևէ մեկին տուժողին ներկայացնելը, հայցեք նրա թույլտվությունը: Մի՛ ստիպեք նրան, եթե հրաժարվում է:

----> **Ակտիվ քայլեր մի՛ ձեռնարկեք բնությունից տուժածին գտնելու համար:** Պարզապես հասանելի

եղեք, երբ որևէ մեկը աջակցություն խնդրի:

----> **Հիշե՛ք Ձեր առաքելության մասին:** Հունանիտար ոլորտի բոլոր աշխատողներն առանց դատելու ու խտրականության պարտավոր են, աջակցել մարդկանց անկախ նրանց սեռից, սեռական կողմնորոշումից, գեղերային ինքնությունից, ամուսնական կարգավիճակից, հաշմանդամությունից, տարիքից, էթնիկ, ցեղային, ռասայական, կրոնական պատկանելությունից, անկախ բնություն գործադրած անձից և այն իրավիճակից, որում բնությունը կիրառվել է:

## Որդեզրե՛ք զոհակենտրոն մոտեցում՝ մշտապես կիրառելով ներքոգրյալը.

----> **Հարգանք.** ձեր բոլոր գործողություններում պարտավոր եք առաջնորդվել տուժողի ընտրության, ցանկությունների, իրավունքների ու արժանապատվության նկատմամբ հարգանքի դրսևորմամբ:

----> **Անվտանգություն.** տուժողի անվտանգությունն առաջնային է:

----> **Գաղտնիություն.** մարդիկ իրավունք ունեն ընտրելու, թե ում կպատմեն կամ չեն պատմի իրենց հետ պատահածի մասին: Գաղտնիություն պահպանելը նշանակում է որևէ մեկին լսածը չփոխանցելը:

----> **Ոչ խտրական մոտեցում.** աջակցության կարիք ունեցող ցանկացած անձ պետք է արժանանա հավասար և արդար մոտեցման:

----> **Եթե առողջապահական ծառայությունները հասանելի են, դրանց մասին միշտ տեղեկատվություն տրամադրեք:** Հաղորդեք ձեզ հասանելի տեղեկատվությունը և, ինչն ավելի կարևոր է, նշեք, թե ինչ չգիտեք: Թույլ տվեք տուժողին որոշել, թե ում դիմել իսկ ում՝ ոչ: Բնությանը հաջորդած 72 ժամերի ընթացքում ստացված որակյալ բժշկական ծառայությունը կարող է կանխարգելել սեռական ճանապարհով փոխանցվող վարակների

տարածումը, իսկ 120 ժամվա ընթացքում կարելի է կանխել անցանկալի հղիությունը:

→ **Ֆաշմանդամություն** ունեցող անձանց թույլ տվեք խոսել առանց իրենց խնամատարների ներկայության, եթե նրանք այդպես են ցանկանում կամ եթե դա չի վտանգում նրանց հարաբերությունները ու անցանկալի լարվածությունն ստեղծում:

→ **Տղամարդու կամ տղայի** նկատմամբ սեռական բռնությունը չի ենթադրում, որ նա նույնասեռական է: Գենդերային բռնության հիմքում ուժն ու իշխելու կարողությունն է, այլ ոչ՝ սեռական պատկանելությունը:

→ **Սեռական և գենդերային փոքրամասնությունները** իրենց սեռական կողմնորոշման կամ ինքնության պատճառով հաճախ առավել մեծ բռնության ու վնասի ռիսկի տակ են: Ուշադիր լսեք նրանց և փորձեք օգնել բոլոր տուժածներին:

→ **Գենդերային բռնություն կարող է գործադրել ցանկացած անձ**, այդ թվում՝ ամուսինը, զուգընկերը, ընտանիքի այլ անդամը, խնամատարը, հարազատը կամ ամուսնու ծնողները, օտար մեկը կամ սեռական ծառայությունների դիմաց գումար կամ սնունդ առաջարկող որևէ մեկը:

→ **Գենդերային բռնության ենթարկվել կարող է ցանկացած անձ**, այդ թվում՝ ամուսնացած անձինք, տարեցներից կամ նրանք, ովքեր, սեռական ծառայություններ են մատուցում: Ի դեպ, ցանկը սահմանափակված չէ միայն թվարկվածներով:

→ **Պաշտպանեք տուժողի ինքնությունն ու անվտանգությունը**: Որևէ գրառում մի արեք, երբեք մի նկարահանեք կամ բառացիորեն փոխանցեք անձը բացահայտող որևէ տվյալ կամ տեղեկատվություն տուժողի պատմությունից՝ անգամ ձեր վերադասին: Չեռախոսեք ու համակարգիչները մի կողմ դրեք, որպեսզի բռնության են-

**թարկված անձը կասկածներ չունենա որ նրան տեսաձայնագրում են:**

→ **Ինքնությունը բացահայտող տվյալ է** համարվում անձի անունը, բնարարի անունը, ծննդյան ամսաթիվը, գրանցման համարը, տան հասցեն, աշխատավայրի հասցեն, երեխաների դպրոցը, միջադեպի ժամն ու հստակ վայրը և այլն:

→ Ձեր թմի, գործընկերների կամ ձեզ գոտեպնդող և աջակցող անձանց **պատմեք միայն այնպիսի տեղեկատվությունը, որն ընդհանուր է և չի կարող օգտագործվել անձը բացահայտելու համար:**

**Օրինակ 1.** «*Ինձ հասել են տեղեկություններ, որ ջրհորի մոտ մարդկանց սեռական ունտնությունների են ենթարկում, քանի որ այն բավականին մեկուսի վայրում է գտնվում: Մենք կարող ենք նվազեցնել այդ ռիսկը՝ բնակավայրին մոտ ջրհոր սարքելով կամ խրախուսելով, որպեսզի ջրառը խմբերով իրականացնեն*»:

**Օրինակ 2.** «*Մեկն ինձ պատմեց, թե իր հետ ինչ է պատահել: Մանրամասները փոխանցել չեմ կարող, բայց աջակցության կարիք ունեմ այդ պատմության ազդեցությունը չեզոքացնելու համար*»:



# ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԾԱՌԸ

Երեխաների և  
դեռահասների  
դեպքում այցելեք  
էջ 16:



## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՔ:

Մշտապես տեղյակ եղեք առկա  
ծառայությունների մասին:

### Ձեզ պատմել են ԳԲ դեպքի մասին: Ի՞նչ պետք է անել:

Եթե **այլ անձ** է, ապա տրամադրեք թարմ  
և ճշգրիտ տեղեկատվություն բռնության  
ենթարկվածներին ծառայությունների  
մատուցող հասանելի կառույցների  
մասին: Հորդորեք տվյալները տրամադրել  
տուժածին՝ պահպանելով նրա  
գաղտնիությունն ու անվտանգությունը:  
**Երբեք մի փորձեք գտնել գենդերային  
բռնություն վերապրած անձանց:**

Եթե տեղեկացնողը **բռնության  
ենթարկված** անձն է, ապա համակ  
ուշադրությամբ լսեք նրան (7-8-րդ էջեր):  
Ներկայացրեք: Հարցրեք, թե ինչպես  
կարող եք օգնել: Մշտապես  
պահպանեք հարգանքի,  
անվտանգության, գաղտնիության և  
խտրականության բացառման  
միջավայրը:

### Արդյո՞ք տարածքում առկա է ԳԲ հարցերով գործող մասնագիտացած կառույց կամ ուղղորդման համակարգ:

**ԱՅՈ:** Տեղեկացրեք ԳԲ կանխարգելման  
և վերացման առկա համակարգի  
ծառայությունների մասին և տուժած  
անձի համաձայնության դեպքում  
ուղղորդեք նրան համապատասխան  
ծառայություն:

**ՈՉ:** Օգնեք տուժողին կապ  
հաստատել առկա ծառայությունների  
հետ (9-10-րդ էջեր): ԸՇգրիտ  
տեղեկատվություն տրամադրեք  
առկա այլ ծառայությունների  
վերաբերյալ:

### Արդյո՞ք բռնություն վերապրած անձը ցանկանում է ՈՐԵՎԷ ծառայությունից օգտվել:

**ԱՅՈ:** Տրամադրեք մանրամասն  
տեղեկատվություն առկա ռեսուրսների  
ու ծառայությունների, այդ թվում՝ դրանց  
հասանելիության, վայրի, աշխատանքային  
ժամերի, ապահով երթուղիների կամ  
փոխադրամիջոցների մասին: Տուժած  
անձի կամ իր հետ պատահածի մասին  
տեղեկությունը մի փոխանցեք որևէ երրորդ  
անձի առանց տուժողի համաձայնության:  
Մի գրանցեք տուժողի հետ կատարվածի  
մանրամասները կամ նրա անձը հաստատող  
տվյալներ:

**ՈՉ:** Պահպանեք  
գաղտնիություն: Բացատրեք  
տուժած անձին, որ նա  
կարող է վերանայել իր  
որոշումը և ծառայությունների  
օգնությանը դիմել ավելի  
ուշ: Եթե մատուցվող  
ծառայությունները  
ժամանակավոր կամ շրջիկ  
բնույթ են կրում, ապա  
տեղեկացրեք, թե երբ դրանց  
այլևս հասանելի չեն լինի:

# ԱՌԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Լրացրեք այս տեղեկատվական թերթիկը Ձեր տարածքում գործող ծառայությունների հիման վրա և պահեք այն հեշտ հասանելի վայրում:

Աշխատեք գենդերային բռնության հարցերով մասնագետի, ձեր ղեկավարի, թիմի ղեկավարի և այլ դերակատարների հետ՝ պարզելու (1) մարդասիրական կազմակերպությունների և (2) համայնքային ծառայությունների առկայությունը, ինչպիսիք են կրոնական խմբերը, կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող կազմակերպությունները և այլն:

Երեխայի պաշտպանություն	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Հոգեկան առողջություն և սոցիալ-հոգեբանական աջակցություն	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Առողջապահություն	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Սեռական և վերարտադրողական առողջություն	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Ոչ պարենային և հիգիենայի (մաքրության) պարագաներ	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Ապաստարան	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	

Իրավական	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Սևուկ և սևուցում	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Ծառայություններ դեռահասների ու երիտասարդների համար	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Ծառայություններ հաշմանդամություն ունեցող անձանց համար	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Ծառայություններ սեռական և գենդերային փոքրամասնությունների համար	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Ծառայություններ կին կամ ընտանիքի անչափահաս ղեկավար ունեցող տնային տնտեսությունների համար	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Այլ	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	
Այլ	Առկա տեղեկատվություն	
	Պատասխանատու անձինք	

# ԻՆՉ ԱՆԵԼ ԿԱՍ ԻՆՉ ՉԱՆԵԼ ԵՎ ԻՆՉ ԱՍԵԼ

Անչափահասների  
ու դեռահասների  
ղեկավարում այցելեք  
16-րդ էջը



## ՅԵՏԵՎԵՔ

### ԻՆՉ ԱՆԵԼ

- ✓ Թույլ տվեք տուժածին դիմել ձեզ և լսեք նրա կարիքները:
- ✓ Հարցրեք, թե ինչպես կարող եք օգնել նախնառաջ առաջնային կարիքները հոգալու գործում: Որոշ տուժածներ կարող են հագուստի կամ բժշկական ծառայությունների կարիք ունենալ:
- ✓ Հարցրեք տուժողին, թե արդյո՞ք նա հարմար է գտնում խոսել տվյալ վայրում: Եթե նրան ուղեկցող այլ անձ կա, ապա պետք է ենթադրել, որ նրա համար ապահով է այդ անձի ներկայությամբ խոսելը:
- ✓ Ջուր, անձեռոցիկ կամ հարմարավետ նստելու տեղ առաջարկեք:
- ✓ Հարցրեք տուժողին, թե իր համար ով է վստահելի անձ աջակցություն կամ թարգմանություն ապահովելու իմաստով:

### ԻՆՉ ՉԱՆԵԼ

- ✗ Մի անտեսեք ձեզ մոտեցած անձին, ով պատմում է իր հետ պատահած վատ, անհարմար, սխալ բաների կամ բռնության մասին:
- ✗ Երբեք մի ստիպեք անձին ընդունել ձեր աջակցությունը և ճնշում մի գործադրեք:
- ✗ Ավելորդ հուզականություն մի ցուցադրեք: Հանգիստ եղեք:
- ✗ Մի ստիպեք բռնություն վերապրած մարդուն պատմել այն, ինչ նա հարմար չի գտնում ասել: Ձեզ համար երկրորդական պետք է լինի այն, թե ինչ է պատահել և ում կողմից, քանի որ ձեր հիմնական դերը լսելն է ու հասանելի ծառայությունների վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը:
- ✗ Երբեք մի հարցրեք, թե արդյո՞ք անձը սեռական բնույթի բռնության է ենթարկվել կամ բռնաբարվել:

### Օրինակներ, թե ինչ կարելի է ասել.

- Ինձ թվում է՝ Դուք բուժօգնության կարիք ունեք, կցանկանա՞ք Ձեզ ուղղորդեմ հիվանդանոց:
- Արդյո՞ք այստեղ Ձեզ հարմար է, թե՞ կցանկանաք մեկ այլ, առավել հարմար վայրում շարունակել զրույցը:
- Ջուր կուզե՞ք: Համեցեք, նստեք, եթե կցանկանաք:





# ԼՍԵՔ

## ԻՆՉ ԱՆԵԼ

- ✓ Լսած ցանկացած բան գաղտնի պահեք: Եթե աջակցության ու խորհրդի կարիք ունեք, որպեսզի տուժածին ավելի լավ օգնեք, նախապես թույլտվություն ստացեք նրանից մինչև գործընկերոջը կամ մասնագետին դիմելը: Մասնագետի կամ գործընկերոջ հետ խոսելիս՝ երբեք մի բացահայտեք տուժողի անձնական տվյալները:
- ✓ Կախված ձեր երկրի օրենսդրությունից, դուք կարող եք **գաղտնիության պահպանման որոշակի սահմանափակումներ ունենալ:**<sup>1</sup> Դրանց մասին նախապես տեղեկացրեք բռնություն վերապրած անձին:
- ✓ Հստակ բացատրեք Ձեր դերը:
- ✓ Ավելի շատ լսեք, քան խոսեք:
- ✓ Խոսելիս աջակցություն ու կարեկցանք ցուցաբերեք: Եվս մեկ անգամ նշեք, որ կատարվածը նրա մեղքով չէ:

## ԻՆՉ ՉԱՆԵԼ

- ✗ Ոչինչ մի նշեք, գրառումներ մի արեք, մի նկարահանեք որևէ սարքով, այդ թվում՝ մի տեղեկացրեք այլոց կամ լրատվամիջոցներին:
- ✗ Հարցեր մի տվեք պատահածի մասին: Փոխարենը, համակ ուշադրությամբ լսեք և հարցրեք, թե ինչպես կարող եք օգտակար լինել:
- ✗ Երբեք մի համեմատեք տվյալ անձի հետ պատահածը մեկ այլ անձի պատմության հետ: Երբեք մի ասեք. «Լուրջ բան չկա» կամ «եղածը փոքր բան է կամ կարևոր չէ»: Կարևորը բռնություն վերապրած անձի զգացմունքներն են:
- ✗ Երբեք կասկածի տակ մի դրեք կամ մի հակադրվեք տուժողի պատմածին: Հիշեք, որ ձեր դերը լսելն է և առկա ծառայությունների մասին տեղեկատվություն փոխանցելը:

### Օրինակներ, թե ինչ կարելի է ասել.

- > Ինչպե՞ս կարող եմ օգնել Ձեզ:
- > Մեր խոսակցությունը կմնա այս սենյակում ու միայն երկուսիս միջև: Ես առանց Ձեր թույլտվության այն ոչ ոքի չեմ պատմի:
- > Ես իմ հնարավորությունների սահմաններում կփորձեմ աջակցել Ձեզ, բայց ցավոք, ես մասնագետ չեմ: Ես կարող եմ փոխանցել Ձեզ առկա ծառայությունների ցանկն ու մանրամասն տեղեկատվություն տրամադրել:
- > Ինձ կարող եք պատմել այն ամենը, ինչը հարմար եք գտնում: Կարիք չկա պատմել ինձ Ձեզ հետ պատահածը, որպեսզի ես Ձեզ փոխանցեմ առկա ծառայությունների ցանկն ու մանրամասն տեղեկատվություն տրամադրեմ: Ցավում եմ Ձեզ հետ կատարվածի համար:
- > Այդ ամենը (պատահածը) Ձեր մեղքով չէ:

<sup>1</sup>Կան դեպքեր, երբ տվյալ հանգամանքներում գործում են պարտադիր հարողորման կանոններ: Լրացուցիչ տեղեկությունների և ուղղորդման համար դիմեք երեխայի պաշտպանության կամ գեղերային բռնության հարցերով մասնագետին:



# ԿԱՊԵ

## ԻՆՉ ԱՆԵԼ

- ✓ Չարգեք վերապրողի ինքնուրույն որոշումներ կայացնելու իրավունքը:
- ✓ Տրամադրեք բոլոր առկա ծառայությունների ցանկն ու տեղեկատվությունը՝ անգամ գեղեցիկ բռնության հարցերով չմասնագիտացածներինը:
- ✓ Տեղեկացրեք բռնությունը վերապրած անձին, որ պարտավոր չէ անմիջապես որոշում կայացնել: Նա կարող է հետո մտափոխվել և միգուցե ցանկություն ունենալ դիմել այդ ծառայություններին:
- ✓ Տուժողից ճշտեք, թե ում կարող է դիմել աջակցություն ստանալու համար (ընկեր, ընտանիքի որևէ անդամ, վստահելի այլ անձ):
- ✓ Առաջարկեք Ձեր հեռախոսը տուժածին, որպեսզի նա կարողանա զանգահարել ըստ ցանկության իր համար վստահելի որևէ մեկին:
- ✓ Որևէ քայլ անելուց առաջ անձից թույլտվություն ստացեք:
- ✓ Չրույցն ավարտեք աջակցող խոսքերով



## ԻՆՉ ՉԱՆԵԼ

- ✗ Մի չափազանցեք ձեր կարողությունները, սխալ տեղեկատվություն կամ խոստումներ մի տվեք:
- ✗ Մի հայտնեք ձեր անձնական խորհուրդն ու կարծիքը լավագույն միջոցների ու հետագա քայլերի վերաբերյալ:
- ✗ Երբեք մի ենթադրեք, որ գիտեք, թե դիմացինն ինչ կարիքներ ունի կամ ինչ է ցանկանում: Որոշ քայլեր կարող են խարանի, հակահարվածի ու վնասելու ռիսկ պարունակել տվյալ անձի համար:
- ✗ Երբեք ենթադրություններ մի արեք դիմացինի փորձառության մասին և խտրական վերաբերմունք մի ցուցաբերեք՝ ելնելով տարիքից, ամուսնական կարգավիճակից, հաշմանդամությունից, կրոնական կամ էթնիկ պատկանելությունից, սեռական կողմնորոշումից, գեղեցիկ բռնության ինքնությունից կամ բռնարարի ինքնությունից (և այլն):
- ✗ Երբեք մի փորձեք հաշտարարի դեր ստանձնել բռնությունից տուժողի և մեկ այլ անձի միջև, այդ թվում՝ բռնարարի, ընտանիքի այլ անդամի, համայնքի այլ անդամների, համայնքի ղեկավարի ու այլոց միջև:
- ✗ Երբեք որևէ այլ անձի մի փոխանցեք բռնություն վերապրած անձի հետ պատահածի մանրամասները կամ նրա անձը հաստատող տվյալները: Այս տվյալները չպետք է փոխանցվեն բռնության ենթարկված անձի ընտանիքի անդամներին, ոստիկանությանը, անվտանգության ծառայություններին, համայնքի ներկայացուցիչներին, գործընկերներին, տուժողի գործատուին, լրատվամիջոցներին և այլն: Այդ տեղեկատվությունը փոխանցելը կարող է լրացուցիչ վնաս հասցնել նրան:
- ✗ Չարցագրույցի ավարտից հետո մի շարունակեք խոսակցությունը տուժողի հետ կամ մի փորձեք իր հետ կապ հաստատել:



## Օրինակներ, թե ինչ կարելի է ասել.

- > Մեր խոսակցությունը այս սենյակից դուրս չի գալու:
- > Ես խորհրդատու չեմ, բայց կարող եմ ձեռքիս տակ եղած տեղեկատվությունը փոխանցել ձեզ: Ձեզ ու ձեր ընտանիքին հնարավոր աջակցություն կարող են ցուցաբերել մի շարք կառույցներ ու անձինք: Կցանկանա՞ք տեղեկանալ նրանց մասին:
- > Ահա ծառայության տվյալները, այդ թվում՝ դրա գտնվելու վայրը, աշխատանքային ժամերը, ծառայության գինը (եթե վճարովի է), այնտեղ հասնելու անվտանգ տարբերակները և այն անձի տվյալները, ում հետ կարող եք խոսել:
- > Դուք վստահելի մարդ ունե՞ք ում հետ կարող եք կիսվել ու աջակցություն ստանալ: Միգուցե ընտանիքի անդամ կամ ընկեր: Եթե կարիք ունեք խոսել որևէ մեկի հետ, կարող եք օգտվել իմ հեռախոսից:
- > Հաջորդ քայլերին անցնելիս՝ Դուք եք որոշում, թե որն է Ձեզ հարմար տարբերակը: Դա է ամենակարևորը:
- > Հիմա որոշում կայացնելու համար Ձեզ պարտավորված մի զգացեք: Կարող եք մի քիչ մտածել, ու միշտ կարող եք Ձեր որոշումը փոխել:
- > Որպեսզի խնդիրը լուծում ստանա, Ձեր փոխարեն ես չեմ կարող խոսել որևէ մեկի հետ: Փոխարենը կարող եմ լսել Ձեզ և Ձեր մտահոգությունները:
- > Կարծես՝ Դուք արդեն որոշակի պլան ունեք, թե ինչպես առաջ շարժվել: Դա արդեն դրական քայլ է:

## ՏՈՒԺՈՂԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԸ

### Աջակցության դիմելու օգուտներն ու ռիսկերը

Ծառայություններին դիմելը միշտ չէ, որ անվտանգ է և կարող է լրացուցիչ վնաս հասցնել տուժողին: Հիշեք, որ Ձեր դերը թարմ ու ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելն է առկա ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև՝ տուժողին, իր համար անվտանգ միջոցների մասին, ինքնուրույն որոշում կայացնելու հնարավորություն տալն է: Հաշվի առեք ստորև բերված օգուտների և ռիսկերի օրինակները:

#### Աջակցության դիմելու ՌԻՍԿԵՐԸ

- Հնարավոր է, որ տուժողի ընկերներին, ընտանիքին կամ շրջապատին հայտնի դառնան միջադեպի մանրամասները, ինչը խարանի, տնից կամ համայնքից օտարելու կամ բռնության ավելի մեծ ռիսկի պատճառ կարող է դառնալ:
- Հնարավոր է, որ բռնարար(ներ)ը հայտնաբերի տեղի ունեցածի մասին այլոց հայտնի դառնալու փաստը՝ ինչը կարող է հանգեցնել պատասխան բռնության կամ անգամ տուժողի սպանության:
- Հնարավոր է, որ ծառայություն մատուցողները բռնության ենթարկվեն բռնարարի կամ համայնքի կողմից, եթե պարզվի նրանց կողմից տուժողին աջակցելու փաստը:
- Հնարավոր է, ծառայություն մատուցողները ոչ զգայուն աջակցություն մատուցեն, եթե հավուր պատշաճի չեն վերապատրաստվել:

#### Աջակցության դիմելու ՕՐՈՒՏՆԵՐԸ

- Կենսական աջակցության տրամադրում, երբ անձը վտանգի տակ է:
- Ժամանակին գաղտնի, արիեստավարժ և անվտանգ բժշկական օգնություն ստանալու հնարավորություն, որը կարող է նաև ժամանակին կանխարգելել ՄԻԱԿ-ը և անցանկալի հիղիությունը:
- Այլ, առավել հարմարավետ ու արժանապատվությունը հարգող ծառայությունների մատչելիությունը, այդ թվում՝ անվտանգության ու սոցիալ-հոգեբանական աջակցության տարբերակները:
- Հետագա բռնությունը կանխարգելող ծառայությունների հասանելիությունը:

### ՄԵՌՎԱԿԱՆ ՈՏԼԶՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԱՇԱՐՈՒՄ

**Հումանիտար ոլորտի աշխատողի կամ հումանիտար օգնության հետ կապ ունեցողի կողմից**

Պաշտպանությունը սեռական ոտնձգությունից և չարաշահումից (ՊՍՈՉ) մի գաղափար է, որը ընթացում է խոցելի անձանց սեռական ոտնձգությունից և չարաշահումից պաշտպանելու մի շարք քայլեր, որոնք ձեռնարկում են հումանիտար ոլորտի աշխատողներն ու նրանց հետ փոխկապակցված անձինք, այդ թվում՝ մարդասիրական օգնություն բաժանողներ, կամավորներ, անվտանգություն ապահովող անձինք, ենթակապալառուներ, վարորդներ, ՄԱԿ-ի առաքելության անձնակազմ, ՄԱԿ-ի ոստիկանական ուժեր, խաղաղապահներ, առաքիչներ ու ծառայություններ մատուցողներ:

Անկախ բռնարարի ինքնությունից, այստեղ նկարագրված գեղերային բռնության ենթարկված անձին աջակցություն տրամադրելու ճանապարհային քարտեզը շարունակում է նույնը մնալ: Բռնարարի հումանիտար աշխատող կամ մարդասիրական օգնություն բաժանող լինելու արդյունքում լրացուցիչ պատասխանատվության ենթարկելու մանրամասների համար դիմեք երկրում գործող ՊՍՈՉ պատասխանատու անձին կամ ՊՍՈՉ ցանցին:



## ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵՔ

### Նախապատրաստումն առանցքային

**Լշանակություն ունի:** Անգամ գենդերային հենքով բռնության ենթարկվածներին ծառայություն մատուցող կազմակերպությունների կամ պատասխանատու անձանց բացակայության պայմաններում, կարող են առկա լինել այլ ծառայություններ, ներառյալ տեղական/համայնքային մակարդակում, որոնք կարող են բավարարել որոշ կարիքներ: Ամենայն հավանականությամբ, Դուք ավելի մեծ թվով ծառայությունների մասին եք իրազեկված քան պատկերացնում եք:

### Իմացե՛ք առկա ծառայությունների մասին

→ օգտագործեք ձեռքի տակ եղած **տեղեկատվական թերթիկը (5-6 էջեր)** առկա ծառայությունների մասին պատշաճ տեղեկատվություն հավաքագրելու համար: Համագործակցեք գենդերային բռնության հարցերով մասնագիտացած անձի, ձեր թիմի ղեկավարի կամ այլ գործընկերների հետ: Գրի առեք այդ ծառայությունների մասին անհրաժեշտ տվյալները, այդ թվում՝ դրանց փաստացի գտնվելու վայրը, այն անձի կոնտակտային տվյալները ում հետ կարող եք կապ հաստատել, ինչպես նաև ծառայությունների շահառուների տեսակը (օրինակ՝ ծառայություններ միայն կանանց համար, անհրաժեշտ փաստաթղթեր և այլն):

→ Ձեր թիմի ղեկավարին, ծրագրի կամ բաժնի համակարգողին հարցրեք սեռական շահագործման ու չարաշահման կանխարգելման առկա ընթացակարգի մասին: Եթե ձեր կազմակերպությունը չունի մշակված սեռական շահագործման և չարաշահման

կանխարգելման (ՍԾԶԿ) աշխատակարգ, դիմեք ՍԾԶԿ հարցերով պատասխանատու անձին՝ պատշաճ ուղղորդում ստանալու համար:

### Կրկնությունը գիտության մայրն է

- Ծանոթացեք **7-10-րդ էջերում բերված օրինակներին:** Վարժվեք բարձրաձայն կարդալով կամ ձեր գործընկերների հետ միասին: Ինչքան ավելի հաճախ կրկնեք, այդքան ավելի լավ կյուրացնեք ու կօգտագործեք կյուրը, երբ ձեզ օգնության դիմի գենդերային բռնությունից տուժած անձը:
- Օգտվեք խորհուրդներից այն մասին, թե ինչպես կարելի է վարժվել և գործածել ներկայացված կյուրերը:
- **Գրպանի այս ուղեցույցը** օգտակար է բոլոր այն անձանց համար, ովքեր դժվար իրավիճակում են հայտնվել: Յերթական անգամ, երբ ձեր գործընկերը կամ ընկերը դիմի ձեզ օգնության կամ խորհրդի ակնկալիքով, գործածեք այստեղ գետեցված հարցերն ու պնդումները փորձ ձեռք բերելու նպատակով



## ԴԵՏԵՎԵՔ

**Երբ Ձեզ հայտնում են գենդերային բռնության ենթարկված լինելու մասին...**

### Ներկայացեք

- Լշեք, թե ով եք, ձեր անունը և թե ինչով եք զբաղվում: Հարցրեք, թե ինչպես կարող եք օգտակար լինել:

### Փորձեք բավարարել առաջնային կարիքները

- Մարդկանց առաջնային կարիքները կարող են տարբեր լինել, այդ թվում՝

շտապ բժշկական օգնություն, ջուր, սիրելի անձին գտնելու հնարավորություն, ծածկոց, հագուստ (եթե կորել է, վնասվել կամ կեղտոտվել է):  
 Հատկապես, գենդերային բռնության ենթարկված անձանց դեպքում, հագուստը կարող է առաջնային ու հրատապ կարիք հանդիսանալ՝ հարմարավետության ու արժանապատվության վերականգնման տեսանկյունից:

- Թույլ տվեք տուժողին Ձեզ ասել, թե ինչն է նրա համար ապահով ու անվտանգ: Փորձեք տեսածի հիման վրա եզրակացություններ չանել:

**Իմացեք, որ յուրաքանչյուր օգնության դիմելու իր տարբերակը կգտնի**

- Թույլ տվեք, որ տուժողը նախընտրելի ձևով արտահայտի իր հույզերը: Տարբեր մարդիկ տարբեր կերպ են արձագանքում ճգնաժամին և սթրեսին: Ոմանք կարող են լուռ մնալ և չկարողանալ խոսել, մյուսները կարող են գայրանալ և բղավել, մեղադրել իրենց կատարվածի համար, լաց լինել, բռնության դրսևորումներ ունենալ և այլն:
- Հաշմանդամություն ունեցող անձինք, այլ լեզվով հաղորդակցվողները և


այլոք օգնության դիմելու ճանապարհին տարբեր խոչընդոտների են հանդիպում: Պահպանեք զոհակենտրոն մոտեցումն ու գաղտնիության սկզբունքը՝ այս անձանց լսելիս կամ աջակցելիս: Անգամ եթե չէք հասկանում նրան, միշտ կարող եք հոգատարություն ու աջակցություն ցուցաբերել:

- Համոզվեք, որ միշտ կին աշխատակից լինի, ով կարող է աջակցություն ցուցաբերել, մասնավորապես այն դեպքերում, երբ տվյալ մշակույթում կնոջ կամ աղջկա համար տղամարդու հետ շփվելն ընդունված չէ:

**Հստակ գիտկացեք ձեր լիազորությունները**

- Որոշ իրավիճակներում կպահանջվի մասնագիտական աջակցություն, ինչը ձեր լիազորություններից վեր է, օրինակ այն դեպքում, երբ տուժողը երեխա է, հաղորդելը պարտադիր է<sup>2</sup>, տուժողի կյանքին վտանգ է սպառնում կամ երբ տուժողը կարող է վնասել ինքն իրեն կամ այլոց: Կարող են լինել մասնագիտացած անձինք, որոնք ավելի ճիշտ աջակցություն կարող են տրամադրել այս դեպքերում:  
**Դիմեք տեղեկատվական թերթիկի օգնությանը (5-6 էջեր):**

**Հիշեք**, եթե ցանկանում եք վերադասից կամ հումանիտար աջակցության ոլորտի այլ աշխատողից աջակցություն հայցել, **Մի՛ճՍ սկզբում ստացեք տուժողի թույլտվությունը:** Տեղեկացրեք նրան, թե ում հետ եք ցանկանում խորհրդակցել և որ տվյալներն եք պատրաստվում կիսել: Եթե տուժողը հարմար չի գտնում կամ անմիջապես հրաժարվում է իր մասին տեղեկատվությունը այլոց հետ կիսելու մտքից, օգնեք նրան, որքան կարող եք՝ առկա ուղեցույցի շրջանակներում:



<sup>2</sup> Կան դեպքեր, երբ տվյալ հանգամանքներում գործում են պարտադիր հաղորդման կանոններ: Լրացուցիչ տեղեկությունների և ուղղորդման համար դիմեք երեխայի պաշտպանության կամ գենդերային բռնության հարցերով մասնագետին:



## ԼՍԵՔ

Երբ տուժողի հիմնական կարիքները բավարարված են և անմիջական վտանգը չեզոքացված, համակ ուշադրությամբ **ԼՍԵՔ** նրան:

Բռնություն վերապրած մարդը կարող է շատ շփոթված կամ վշտացած լինել, բայց դուք, որպես աջակցություն տրամադրող անձ, պետք է լինեք հնարավորին հանգիստ: Թույլ տվեք նրան տրամադրել այնքան տեղեկատվություն, որքան նա հարմար է գտնում: Ձեր դերը խորհրդատվություն տրամադրելը չէ, դեպի համապատասխան ծառայություններ ուղղորդելը կամ կատարվածի մասին հարցաքննությունը: Միջադեպի մասին մանրամասն հարցեր տալու փոխարեն՝ կենտրոնացեք ձեզ հայտնի և առկա ծառայությունների մասին տեղեկություն տրամադրելու վրա:

### ՅԻՇԵՔ

Որպես կանոն, խուսափեք հարցերից, մասնավորապես այն հարցերից, որ սկսվում են «ԻՆՉՈՒ»-ով, քանի որ դրանք կարող են մեղադրելու տպավորություն թողնել տուժողի վրա: Փոխարենը, պարզապես լսեք կամ եթե հարկն է, հարցրեք. «*Կարող եմ Ձեզ տեղեկացնել առկա ծառայությունների մասին, որոնք Ձեզ աջակցություն կտրամադրեն*» կամ՝ «*Ինչպե՞ս կարող եմ օգնել Ձեզ*»:

## ԼՍԵԼՈՒ ՈՒԺԸ

Երբեմն կարող եք հայտնվել այնպիսի իրավիճակում, երբ ռեսուրսներն ու ծառայությունները բացակայում են և դուք ոչինչ չեք կարող առաջարկել տուժածին: Ձեզ կարող է համակել անզորության զգացումը: Կարևոր է տուժածի հետ շփվելիս լինեք ազնիվ, ցույց տաք, որ հասկանում եք նրա համարձակությունը՝ **տեղի ունեցածը հայտնելու կապակցությամբ**: Ներողություն խնդրեք, եթե չեք կարող օգնություն տրամադրել և գրույցի ամբողջ ընթացքում դիմեք նրան ամենայն արժանապատվությամբ: **Անգամ ուշադրությամբ լսելն ինքնին աջակցություն է**:



## ԿԱՊԵՔ

Երբ աջակցում եք բռնություն վերապրած անձին հաջորդ քայլերի վերաբերյալ որոշում կայացնելիս.

**Յարգրեք նրան, թե ադյո՞ք կա մեկը ում նա վստահում է և կարող է դիմել աջակցության համար:**

- Եթե նա ձեր կարծիքն է հարցնում, խնդրեք ինքնուրույն որոշում կայացնել առ այն, թե ում դիմել, ինչու և երբ:
- Իրավիճակի մասին ձեր անձնական կարծիքը մի արտահայտեք:

**Եթե որոշ ծառայություններ առկա են, ապա տուժողին տրամադրեք ճշգրիտ տեղեկատվություն դրանց կամ առավել հարմար տարբերակների մասին:**

Նախապատրաստվելն առանցքային է: Գործածեք ձեռքի տակ եղած **տեղեկատվական թերթիկը (5-6 էջեր)** և վստահ եղեք, որ առկա ծառայությունների ու դրանց մատչելիության մասին տեղեկատվությունը ճշգրիտ է և թարմացված:

----> Եթե որևէ ծառայության մասին վստահ չեք, այդպես էլ ասեք:

#### Կարեկցանքով ավարտեք զրույցը:

----> Պահպանեք գաղտնիությունը:

----> Դրական արձագանքեք տուժողի ինքնուրույն կայացրած որոշումների նկատմամբ:

----> Յիշեք, որ ձեր դերը տուժողին աջակցելն է, որպեսզի ինքնուրույն ընտրություն ու որոշումներ կայացնի, անգամ այն դեպքում, երբ վերջինս որևէ որոշում չի ընդունում:

----> Մի փորձեք տուժողի հետ պարբերաբար հանդիպել, խորհրդատվություն մատուցել կամ վարել վերջինիս դեպքը:

#### Հանդիպման ավարտից հետո.

**Ինքնահայեցողություն և ինքնախնամք.** կարևոր է հիշել, որ Դուք ամեն բան կարող եք ճիշտ անել, բայց չեք կարող շտկել տուժողի հետ տեղի ունեցածը կամ փարատել վերջինիս տառապանքը: Ուրիշի ցավին հաղորդակից դառնալը կարող է ձեզ սթրեսի ենթարկել և երկրորդային տրավմա առաջացնել: Մտածեք ինքնախնամքի մասին, երբ նմանատիպ զգացողություններն այցելում են ձեզ: Դիմեք ձեզ հասանելի աջակցության համակարգին կամ ցանցին, այդ թվում՝ գործընկերներին, թիմի ղեկավարին կամ գենդերային բնության հարցերով զբաղվող մասնագետին՝ իրավիճակի մասին

տեղեկացնելու (մտապահելով տուժողի տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու սկզբունքը) և աջակցություն ստանալու համար:

Քանի որ բնության որոշ տեսակներ, օրինակ՝ ընտանեկան բնությունը, կարող են պարբերական բնույթ կրել, հնարավոր է նույն անձին նորից տեսնեք կամ տեղեկանաք, որ նույն անձը նորից է ենթարկվել բնության: Նրա վերապարծը փոխել չեք կարող, սակայն կարող եք՝

----> առանց դատելու լսել նրան յուրաքանչյուր առանձին դեպքից հետո, անկախ անցյալում նույն անձի հետ ունեցած զրույցից,

----> մտածել գենդերային բնության ենթարկված անձին մատուցվող ծառայությունները բարելավելու, դրանք առավել ապահով դարձնելու և առավել դրական միջավայր ստեղծելու մասին:



# ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՆՉԱՓԱՅԱՍ՝ 18-Ը ՉԼՐԱՑԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԵՎ ԴԵՌԱՅԱՍՆԵՐԻՆ

## ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ.

----> **Մշտապես կապի մեջ եղեք** ձեր երկրում գործող երեխաների պաշտպանության կամ գենդերային բռնության հարցերով մասնագետների հետ, որպեսզի նախևառաջ հասկանաք, թե (1) ինչ ծառայություններ կան ձեզ մոտ և (2) ինչպիսի աշխատակարգեր ու ընթացակարգեր են գործում տեղում:<sup>3</sup>


----> **Մի վնասեք.** մի փորձեք որոնել բռնության ենթարկված երեխաների: Հետաքննելը կամ գնահատելը, թե արդյո՞ք երեխան կամ դեռահասը բռնության է ենթարկվել, թե ոչ՝ ձեր գործը չէ: Սակայն, եթե երեխան ցանկություն ունի ձեզ դիմելու, մի՛ մերժեք:

----> **Հիշեք ձեր դերը,** եթե երեխան կամ դեռահասը դիմում է Ձեր օգնությանը, ապա լսեք առանց դատելու և աջակցեք երեխային կամ դեռահասին իր կողմից վստահելի համարվող

չափահասին իրավիճակի մասին տեղեկացնելու գործում, ում հետ երեխան կամ դեռահասն իրեն ապահով է զգում: Այդ մեծահասակը անպայման չէ, որ երեխայի կամ դեռահասի ծնողը, ինսամատարը կամ ընտանիքի անդամը լինի: Հիշեք, որ նրա փոխարեն չպետք է որոշում կայացնեք, այդ թվում՝ ստիպեք, որ նրա ինսամատարը կամ մեկ այլ անձ ձեր գրույցին ներկա գտնվի:

----> **Հոգատարություն ցուցաբերեք:** Թույլ տվեք երեխային կամ դեռահասին վարել գրույցը, անգամ եթե դա ենթադրում է, որ դուք լուռ հետևելու եք: Նրա հետ խոսելիս՝ նստեք նրան հավասար, որպեսզի երկուսիդ աչքերը նույն մակարդակի վրա լինեն: Ձեր ժեստերը պետք է անկաշկանդ լինեն, որպեսզի երեխան կամ դեռահասը ցանկության դեպքում հնարավորին չափով անկեղծանա: Խուսափեք հարցեր տալուց այն մասին, թե ինչ է պատահել, ինչու կամ ում հետ: Փոխարենը, խոսեք իրեն հասկանալի լեզվով և սփոփանք արտահայտելով:

**ԻՇԵՆՔ՝** եթե Ձեր տարածքում գործում է երեխաների պաշտպանության կամ գենդերային բռնության հարցերով մասնագիտացած համակարգ, ապա գաղտնիությունը պահպանելով, աջակցեք երեխային կամ դեռահասին այդ մասնագիտացած կառույցներին ու/կամ անձանց դիմելու գործում՝ ավելի որակյալ աջակցություն ստանալու համար: Եթե Ձեր տարածքում **նման կառույցներ կամ համակարգեր չկան**, ապա առաջնորդվեք այստեղ տրված ցուցումներով:



<sup>3</sup>Խորհրդակցեք երեխայի պաշտպանության կամ գենդերային բռնության հարցերով մասնագետի հետ, որպեսզի տեղեկանաք գաղտնիության նկատմամբ կիրառվող օրենսդրական սահմանափակումների և գենդերային բռնության ու երեխայի պաշտպանության աջակցության կենտրոնների մասին:

→ **Ցանկացած երեխայի հետ վարվեք արդար կերպով**, անկախ սեռից, տարիքից, ընտանեկան դրույթունից, ինամատարի կարգավիճակից կամ ինքնության որևէ առանձնահատկությունից՝ երեխայի նկատմամբ անաչառ եղեք: Գենդերային բռնության ենթարկված երեխային մի համարեք անօգնական: Ցանկացած երեխա ունի ինքնավերականգնման ներհատուկ կարողություն: Բռնություն վերապրած երեխայի հետ խոսեք այնպես, որ նա հասկանա. հարգեք նրա կարծիքն ու արժանապատվությունը:

→ **Պահպանեք գաղտնիությունը**. գրառումներ մի արեք, մի լուսանկարահանեք կամ որևէ այլ կերպ մի գրանցեք երեխայի հետ Ձեր ունեցած գրույցը: Մի կողմ դրեք սարքերը՝ հեռախոսը կամ համակարգիչը, որպեսզի երեխայի կամ դեռահասի մոտ տպավորություն չառաջանա, որ խոսակցությունը ձայնագրվում է: Նախապես թույլտվություն ինդրեք երեխայից կամ դեռահասից իրեն վերաբերող որևէ տեղեկատվություն մեկ այլ՝ երրորդ անձին փոխանցելու համար: Սա նշանակում է, որ թույլտվություն պիտի ստանաք անգամ այն դեպքում, երբ տեղեկատվությունը փոխանցելու եք երեխայի կամ դեռահասի կողմից վստահելի անձին:

→ **Երաշխավորեք երեխայի անվտանգությունը**. երեխայի կամ դեռահասի ֆիզիկական և հոգեկան առողջությունը առաջնային կարևորություն ունեն: Երեխայի կամ դեռահասի հետ շփման ընթացքում և հաջորդող քայլերի տեսանկյունից միշտ հիշեք նրա անվտանգության մասին:



Որոշ դեպքերում պարզ չէ, թե ինչպես է պետք **պահպանել երեխայի լավագույն շահը**, ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Եթե կասկածում եք իրավիճակի անվտանգ լինելու մեջ, տեղեկացրեք երեխային, որ հարկ կա գաղտնի խոսելու մեկ այլ մասնագետի կամ գործընկերոջ հետ, ով ավելի լավ գիտի, թե ինչպես կարելի է ապահովել նրա անվտանգությունը:<sup>4</sup>

→ **Հիշեք, որ անչափահասներն ու նրանց խնամողները կարող են օգնության դիմել տարբեր կերպ:** Երեխաներն ու դեռահասները չափահասներից տարբերվում են օգնության դիմելու ձևերի ընտրությամբ և հազվադեպ են բացահայտորեն խոստովանում կատարվածը: Երեխաների համար կարող է դժվար լինել չափահասներին վստահելն ու խոսելը, մասնավորապես, երբ լսողին լավ չեն ճանաչում: Նրանք կարող են վախենալ, ամաչել կամ կաշկանդվել: Կարող են նաև վախենալ իրենց հույզերն արտահայտել: Ձեզ կարող են (1) լուրեր հասնել երեխայի շահագործման մասին կամ (2) օգնություն ստանալու համար երեխայի փոխարեն կամ նրա անունից չափահաս անձինք դիմել կամ (3) դուք կարող եք նաև երեխայի վարքագծի կամ այլ նախանշանների միջոցով փորձել հասկանալ իրավիճակը:

<sup>4</sup>Խոսեք երեխայի պաշտպանության կամ գենդերային բռնության հարցերով մասնագետների հետ, որպեսզի տեղեկանաք գաղտնիության նկատմամբ կիրառվող օրենսդրական սահմանափակումների և գենդերային բռնության ու երեխայի պաշտպանության աջակցության կենտրոնների մասին:

ԵՐԵՆԱՅԻ ՓՈՒԱՐԵՆ ԶԵՉ ՄԵԿ ԱՅԼ ԱՆՁ Ե ՄՈՏԵՑԵԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ, ԱՊԱ.

- ✓ Տրամադրեք թարմ և ճշգրիտ տեղեկատվություն առկա ծառայությունների մասին:
- ✓ Հարգեք գաղտնիությունը:<sup>4</sup>

- ✗ Բամբասանքների հետևից մի գնացեք և մի փորձեք գտնել կամ հարցաքննել երեխային:
- ✗ Մի քննարկեք կամ մի տրամադրեք ձեզ հասած տեղեկատվությունը:<sup>4</sup>

ԵՐԵՆԱՆ ԿԱՄ ԴԵՌԱՅԱՍԸ ԱՆՁԱՄԲ Ե ԴԻՄԵԼ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՊԱ. ՈՒՇԱԴԻՐ ԵՂԵՔ



ՐԵՏԵՎԵՔ

- ✓ Հարցրեք նրան՝ արդյո՞ք ցանկանում է հանգիստ ու մեկուսի տեղ գտնել զրուցելու համար: Այնպես արեք, որպեսզի այլոք ձեզ կարողանան տեսնել, բայց չլսել:
- ✓ Համոզվեք, որ նստել եք երեխայի հասակին համաչափ: Ձեր ժեստերը պետք է անկաշկանդ լինեն:
- ✓ Աղջիկներին և տղաներին հարցրեք, թե արդյո՞ք նախընտրում են մեծահասակ կնոջ կամ տղամարդու հետ խոսել:

- ✗ Երբեք երեխային կամ դեռահասին մի մեկուսացրեք կամ մի ուղղորդեք հանգիստ կամ մեկուսի տեղ առանց նրա ցանկության:
- ✗ Երբեք մի դիպչեք, գրկեք կամ ֆիզիկապես հպվեք, քանի որ դա կարող է հոգեպես վնասել, անհարմարություն կամ սթրես պատճառել:



ԼՍԵՔ

- ✓ Համակ ուշադրությամբ լսեք և ուշադրություն դարձրեք մարմնի շարժումներին, ոչ վերբալ հաղորդակցությանը:
- ✓ Եղեք համբերատար և հանգիստ, ընդունեք լսածն առանց դատելու:
- ✓ Թույլ տվեք երեխային կամ դեռահասին իր բառերով արտահայտվել:

- ✗ Մի հարցաքննեք կամ գնահատական տվեք տեղի ունեցածին: Ոչինչ գրի մի առեք և երեխային մի նկարահանեք: Այլոց մի պատմեք երեխայի կամ դեռահասի կամ իր հետ պատահածի մասին:
- ✗ Մի ցուցադրեք զայրույթի, զարմանքի կամ թերահավատության որևէ այլ նշան, որը կարող է ազդել նրա վրա:
- ✗ Մի գործածեք բարդ բառեր և շատ մի խոսեք:



## ՍՓՈՓԵՔ

- ✓ Երեխային կամ դեռահասին վստահեցրեք, որ նա առանց մտահոգվելու կարող է ձեզ պատմել իր հետ պատահածը:
- ✓ Հարգեք երեխայի կարծիքը, համոզմունքներն ու մտքերը:
- ✓ Օգտագործեք հանգստացնող բառեր, որոնք համապատասխանում են տեղի մշակույթին, օրինակ՝  
«Ես հավատում եմ քեզ»,  
«Շնորհակալ եմ, որ վստահեցիր ու պատմեցիր»,  
«Շնորհակալ եմ, որ կիսվեցիր»:

- ✗ Խոստումներ մի տվեք, եթե դրանք պահել չեք կարող: Օրինակ՝ մի ասեք, որ ամեն բան լավ կլինի, երբ երեխայի բարեկեցությունը ձեր վերահսկողությունից դուրս է:
- ✗ Մի ստիպեք երեխային կամ դեռահասին ձեզ հետ շարունակել զրույցը, եթե ցանկություն չունի:



## ԿԱՊԵՔ

- ✓ Հարցրեք, թե արդյո՞ք կա մեկն ում երեխան կամ դեռահասը վստահում է: Հարցրեք, թե արդյո՞ք կարող եք նրան օգնել կապ հաստատել այդ անձի հետ կամ ուղեկցել այդ անձի մոտ:
- ✓ Մնացեք երեխայի կամ դեռահասի հետ մինչև նա ապահով զգա կամ մինչև իր կողմից վստահելի համարվող անձը ձեզ միանա:
- ✓ Երեխային կամ դեռահասին և իր հետ գտնվող վստահելի չափահասին փոխանցեք ճշգրիտ ու թարմ տեղեկատվություն առկա ծառայությունների ու դրանցից օգտվելու ճանապարհների մասին:
- ✓ Ասեք այն ինչ գիտեք և ինչը՝ ոչ: Օրինակ՝ ասեք «Ես չգիտեմ» կամ «տեղեկություն չունեմ», եթե հետաքրքրող տեղեկատվությանը չեք տիրապետում:

- ✗ Մի պարտադրեք երեխային կամ դեռահասին խոսել իր ընտանիքի անդամների կամ խնամատարների ներկայությամբ, որովհետև վերջիններս կարող են բռնաբարները լինել կամ երեխան կարող է ցանկություն չունենալ նրանց ներկայությամբ խոսել պատահածի մասին:
- ✗ Երեխային կամ դեռահասին միայնակ մի թողեք, մասնավորապես երբ լալիս է, գայրացած է կամ ցնցված:
- ✗ Ինքնուրույն մի փորձեք լուծել խնդիրը, պլաններ կազմել կամ երեխայի կամ դեռահասի փոխարեն որոշումներ կայացնել:

## Երեխայի՝ ըստ տարիքի որոշում կայացնելու ունակության մասին

Հաշվի առեք, որ գենդերային բռնության ենթարկված երեխաների ու դեռահասների հետ աշխատող մասնագետը լավագույնս կարող է նրա և նրա խնամատարի հետ գործակցաբար որոշել երեխայի կամ դեռահասի որոշում կայացնելու ունակությունը:

**Քանի որ մասնագետի դերում հանդես չեք գալիս, ապա ձեր դերը պետք է լինի երեխային կամ դեռահասին լսելի ու հանգստացնելը, նրա և այն անձի միջև կապ հաստատելը, ում նա վստահում է և առկա ծառայությունների մասին տեղեկատվություն տրամադրելը:**

Ստորև բերված տարիքային խմբերը ներկայացված են որպես ծանոթություն և կարող են փոխվել կախված տարիքից, հասունության աստիճանից, զարգացման փուլից և այլ գործոններից:

**15 տարեկան և ավելի մեծ դեռահասները** բավարար հասուն են իրենց հետ պատահածը հասկանալու և որոշում կայացնելու համար:

----> **Ձեր դերն է** (1) լսել նրան, երբ պատմում է, (2) աջակցել վստահելի անձի հետ կապ հաստատելու ու շարունակական աջակցություն ստանալու գործում և (3) առկա ծառայությունների ու դրանցից օգտվելու մասին տեղեկատվություն տրամադրելը:

**6-9 տարեկան երեխաներն ու 10-14 տարեկան դեռահասները** միշտ չէ, որ կարող են բռնության մասին հաղորդել և ինքնուրույն որոշում կայացնել:

----> **Ձեր դերն է** (1) աջակցել երեխային վստահելի անձի հետ կապ հաստատելու և այդ անձի աջակցությամբ հաջորդ քայլերը պլանավորելու գործում, ինչպես նաև (2) առկա ծառայությունների և դրանցից օգտվելու մասին տեղեկատվություն տրամադրելը:

**0-5 տարեկան մանուկներն ու երեխաները** բռնության մասին հաղորդել չեն կարող՝ հաղորդակցման հմտությունների բացակայության կամ սահմանափակ լինելու պատճառով: Ամենայն հավանականությամբ, մեկ այլ անձ (ընտանիքի ընկերը, խնամողը, ընտանիքի այլ անդամը, հարևանը) կփորձի օգնություն հայցել երեխայի համար:

----> **Ձեր դերն է** այդ անձին առկա ծառայությունների ու դրանց հասանելիության մասին տեղեկատվություն տրամադրելը:

*Մշակված է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի «Լավագույն շահը սահմանելու ուղեցույցի» (2008թ.), ինչպես նաև Կարմիր խաչի միջազգային գրասենյակի և ՅՈՒՆԻՍԵֆ-ի «Սեռական ոտնձգության ենթարկված երեխայի խնամքի» մասին համատեղ ձեռնարկի (2012թ.) հիման վրա:*





Այս ուղեցույցը կցված է Միջգերատեսչական մշտական  
հանձնաժողովի գեներալին հենքով բռնության ուղեցույցին, 2015թ.  
[www.gbvguidelines.org](http://www.gbvguidelines.org)

[www.gbvguidelines.org/pocketguide](http://www.gbvguidelines.org/pocketguide)



ԳՅԲ գրպանի ուղեցույց